

## INSTRUCTIONS FOR FILLING THE APPLICATION

Applicant's personal and contact information should be filled in 1-4 fields of the application.

The 5th field includes information about the trademark. Trademark image size is 8x8 cm. If the size is bigger, it should be attached separately. If the label is presented as a trademark, its image may be presented in its original size. If the size of the label exceeds 21 x 29.7 cm, the claimed trademark is presented in a reduced size. 5.2 field is for trademark description, its type (word, picture, etc.). 5.3—5.15 fields are filled for specific cases.

The 6th field is filled if priority is requested.

The 7th field concerns the international classification of goods and services applied for the registration of trademarks. The classification is based on The Nice Classification (NCL), established by the Nice Agreement in 1957. In this field, the class and list of goods and services, that match your product, should be indicated. You can find the information about the list of classified goods and services by following this link— <http://aipa.am/hv/Nicell>.

In the 8th field you need to sign the application, indicating the date and signatory.

State duty payment is indicated in the 9th field.

Finally, the 10th field is filled in case of attaching additional or supplemental documents.

## ՀԱՅՏԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հայտը ներկայացվում է հայերեն: 1-4 դաշտերում լրացվում են հայտատուի մասին տեղեկությունները:

Ապրանքային նշանի ներկայացվող պատկերը պետք է ունենա որակյալ գրաֆիկական կատարում եւ ներկայացվի որակյալ, հարթ եւ սպիտակ, առնվազն 80 գ/քառ.մ տեսակարար կշռով թղթի վրա, 5x5 չափերով: Կախված նշանի չափերից, լուսանկարը կամ դրոշմվածքը կարող է լինել մինչեւ 8x10 սմ: Եթե ապրանքային նշանի պատկերը գերազանցում է 8x8 սմ չափսերը, ապա 5.1 դաշտում պետք է նշեք համապատասխան վանդակը եւ հայտին կցեք պատկերը:

Ապրանքի պիտակը որպես նշան գրանցման պարագայում պատ- րաստի պիտակն իր իրական չափերով կարող է ներկայացվել որպես հայտարկվող նշանի պատկեր, եթե դրա չափերը չեն գերազանցում 21x29.7 սմ: Ավելի մեծ չափով պիտակի դեպքում պատկերը տրվում է փոքրացված չափով: Եթե գրանցման է ներկայացվում ծավալային (եռաչափ) ապրանքային նշան (5.5 դաշտ), ապա կցվում է այդ նշանի ընդհանուր տեսքը՝ բոլոր անհրաժեշտ պրոյեկցիաները: Նշանի լուսանկարները կամ տպագրական դրոշմվածքները ինչպես ձեւաթղթում, այնպես էլ դրան կից ներկայացվում են այն գույնով կամ գունային համակցությամբ, որով ներկայացվում է նշանի գրանցումը:

5.2 դաշտում նկարագրության մեջ տրվում է ապրանքային նշանի բնութագիրը՝ դրա տեսակը (բառային, պատկերային եւ այլն), բաղկացուցիչ տարրերի նկարագրությունը, նշանի և դրա առանձին տարրերի իմաստային նշանակությունը:

Ձայնային կամ լուսային նշան գրանցման ներկայացնելու դեպքում պետք է ներկայացվեն նաև դրանց ձայնագրված (տեսագրված) տեսալսատրիզները կամ սկավառակները (5.8 դաշտ):

- ձայնային նշան. տրվում է ձայնի տեսակը (երաժշտական ստեղծագործություն կամ դրա մի մասը, որեւէ ծագում ունեցող աղմուկ եւ այլն): Եթե նշանի մեջ օգտագործված է երաժշտական ստեղծագործություն, ապա նկարագրության մեջ տրվում է դրա նոտագրությունը:

- լուսային նշան. տրվում են լուսային ազդանշանների, դրանց հաջորդականության, լուսարձակման երկարության, տևողության եւ այլ առանձնահատկությունների բնութագրերը:

Գունավոր նշանի դեպքում նշվում է դրա գույնը կամ գունաշարը (5.11 դաշտ): Գույների նկարագրությունը պետք է համապատասխանի նշանի մեջ օգտագործված գույներին:

6.1-6.10 կետերը լրացվում են ապրանքային նշանի ավելի վաղ առաջնայնություն խնդրարկելու պարագայում:

7-րդ կետում նշվում է Դասակարգման միջազգային համակարգի (Նիցցայի դասակարգիչ8) դաս(եր)ը, որին (որոնց) համապատասխանում է Ձեր ապրանքը: Ընդհանուր առմամբ, կան 45 տարբեր դասեր: Օրինակ՝ մեղրը համապատասխանում է դաս 30-ին: Եթե ներկայացվող ապրանքային նշանը պատկանում է մի քանի դասի, հայտի մեջ նշեք բոլորը՝ ըստ աճող հերթականության: Ապրանքները պետք է նշվեն ճշգրիտ տերմիններով՝ հնարավորություն տալով դյուրին նույնականացնել ապրանքը:

Հայտին կցվող փաստաթղթերը կարող են ներկայացվել այլ լեզուներով: Այդ դեպքում ՀՀ հայտատուները պարտավոր են դրանց հայերեն թարգմանությունը ներկայացնել հայտի հետ, իսկ օտարերկրյա հայտատուները՝ հայտը ներկայացնելու օրվանից երկամսյա ժամկետում:

Հայտին կցվում են նաեւ արտոնագրային հավատարմատարի կամ ներկայացուցչի իրավասությունը հաստատող փաստաթուղթը (լիազորագիրը), եթե հայտը ներկայացվում է նրա միջոցով:

Հայտին կցվում են նաև հայտ ներկայացնելու եւ փորձաքննություն անցկացնելու համար սահմանված չափով պետական տուրքի վճարման անդորրագիրը: